



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13, Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

22.12. 2021 թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՄԵԿՆԱՐԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մեկնարկել է 2021 թվականի ձմեռային գորակոչը:

Միրելի նորակոչիկներ՝ ր,

Դուք գնում եք փոխարինելու ձեր ավագ ընկերներին և այսուհետ նաև ձեզնից է կախված մեր հայրենիքի, մեր երկրի ու մեր սահմանների պաշտպանությունը:

Տղե՛րք,

Շնորհավորելով ձմեռային գորակոչի մեկնարկի առթիվ՝ եղբայրաբար պիտի խնդրեմ ու հորդորեմ՝ ծառայությանը վերաբերեք որպես սրբազան պարտքի առ հայրենիք, երբեք չկորցնեք զգոնությունն ու սթափությունը, միմյանց թև ու թիկունք լինելով՝ ծառայեք և բոլորդ ողջ ու առողջ վերադարձեք ձեր օջախներ:

Շնորհավորում եմ նաև մեր նորակոչիկների ծնողներին ու հարազատներին՝ մաղթելով, որ հպարտությամբ մեկտեղված սպասումը թեթև ու անվտանգ անցնի, իսկ տղաները անփորձանք ու խաղաղ պայմաններում ծառայեն ու պատվով վերադառնան:

Բարի ծառայություն ձեզ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա.ՍԱՀԱԿՅԱՆ